



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 1728/3 . 04 10 201 70

ԵՊՀ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի «Որակյալ կրթություն» նպատակի 1.1. խնդրի 4-րդ կետի իրականացման նպատակով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Վերամշակել ԵՊՀ բակալավրի գործող կրթական ծրագրերը՝ «ԵՊՀ բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը» (հաստատված՝ ԵՊՀ գիտխորհրդի 2017թ. մայիսի 4-ի որոշմամբ), «ԵՊՀ կրթական ծրագրերի մշակման մեթոդական ուղենիշները» (հաստատված՝ ԵՊՀ գիտխորհրդի 2010թ. հոկտեմբերի 28-ի որոշմամբ) և «ՀՀ որակավորումների ազգային շրջանակը» (հաստատված՝ ՀՀ կառավարության 2016 թ. հուլիսի 7-ի N 714 – Ն որոշմամբ) չափորոշիչ փաստաթղթերի պահանջներին և դրույթներին համապատասխան:
2. Բակալավրի կրթական ծրագրերի մշակումը, փորձաքննությունը և հաստատումն իրականացնել համաձայն՝ «ԵՊՀ կրթական ծրագրերի հաստատման կարգի» (հաստատված՝ ԵՊՀ գիտխորհրդի 2014թ. հունվարի 30-ի որոշմամբ) դրույթների:

3. Սահմանել ԵՊՀ բակալավրի գործող կրթական ծրագրերի վերամշակման և հաստատման գործընթացների իրականացման ժամանակացույցը՝ ըստ կից հավելվածի:
4. Մույն հրամանի կատարման հսկողությունը դնել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյանի վրա:
5. Մույն հրամանի մասին սահմանված կարգով տեղեկացնել ԵՊՀ ֆակուլտետներին և ուսումնական կենտրոններին:

Ռեկտոր՝



Ա. Ն. Սիմոնյան

ՀԱՎԵԼՎԱԾ

| N | ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ | ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ |
|----|--|--------------------------------------|
| 1. | Ծրագրերի վերամշակման աշխատանքային խմբերի ստեղծում և կազմերի ներկայացում ԵՊՀ Որակի ապահովման կենտրոն (ՈԱԿ) | մինչև 15 հոկտեմբեր, 2017 |
| 2. | Ծրագրի առաջարկի հայտի ձևակերպում և ներկայացում ՈԱԿ | 15-30 հոկտեմբեր, 2017 |
| 3. | Ծրագրերի հայտերի արտոնում (հաստատում) համապատասխան հանձնաժողովի կողմից | 01-10 նոյեմբեր, 2017 |
| 4. | Ծրագրերի ամբողջական փաստաթղթային փաթեթի՝ ծրագրի ուսումնական պլանի, ծրագրի մասնագրի և բաղկացուցիչ ուսումնական մոդուլների համառոտագրերի պատրաստում՝ ըստ սահմանված ձևաչափերի և գործող պահանջների | 11 նոյեմբեր, 2017 – 15 հունվար, 2018 |
| 5. | Ծրագրի ներքին փորձաքննական հանձնաժողովի ստեղծում ըստ գործող կարգի | 01 – 31 դեկտեմբեր, 2017 |
| 6. | Ծրագրի փաստաթղթային փաթեթի ստուգում ՈԱԿ-ի և Ուսումնամեթոդական վարչության կողմից | 16 հունվար – 28 փետրվար, 2018 |
| 7. | Ծրագրի փաստաթղթային փաթեթի տրամադրում փորձաքննական հանձնաժողովին և փորձաքննության անցկացում ըստ գործող կարգի, փորձաքննության եզրակացությունների տրամադրում ՈԱԿ | 01–30 մարտ, 2018 |
| 6. | Փորձաքննության և ՈԱԿ-ի եզրակացությունների ներկայացում գիտական խորհրդի որակի ապահովման մշտական հանձնաժողով՝ վերջնական եզրակացության համար: Վերամշակված ծրագրերի հաստատման/մերժման վերաբերյալ եզրակացության ներկայացում ԵՊՀ գիտական խորհուրդ | 01–15 ապրիլ, 2018 |
| 7. | Կրթական ծրագրի հաստատում ԵՊՀ գիտական խորհրդի կողմից | մինչև 30 ապրիլ, 2018 |